# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 3
# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
# N ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԳՀԱՊՁԲ-18/16-1

ք.Երևան «30» « 11 » 2018թ.

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայությունը, (գործելով Հայաստանի Հանրապետության անունից), ի դեմս ծառայության պետ Ա.Մխոյանի, որը գործում է ծառայության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ «Գնորդ»), մի կողմից, և «Բիզնես Թրենդ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ն.Միքայելյանի (այսուհետ՝ «Վաճառող»), մյուս կողմից, փոխադարձ համաձայնությամբ, հիմք ընդունելով 27.04.2018թ. կնքված N ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԳՀԱՊՁԲ-18/16-1 ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ «Պայմանագիր») 8.5 և 8.8 կետերը՝ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

## 1. Համաձայնագրի առարկան

1.1 Հիմք ընդունելով, որ ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում պահվող կալանավորված անձանց և դատապարտյալների թվաքանակը, կապված համաներման հետ, էական նվազել է, Գնորդի նախաձեռնությամբ կողմերը որոշեցին՝ Պայմանագրի N1 հավելվածով՝ «տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց»-ով, նախատեսված՝ 4-րդ եռամսյակի ընթացքում, մատակարարման ենթակա 6000 կգ «ոլոռ, ամբողջական» ապրանքատեսակի քանակը նվազեցնել 4000 կգ-ով, որի գումարը կազմում է՝ 917380 (ինը հարյուր տասնյոթ հազար երեք հարյուր ութսուն) ՀՀ դրամ, իսկ 27540 կգ «սոխ, գլուխ» ապրանքատեսակի քանակը նվազեցնել 10000 կգ-ով, որի գումարը կազմում է՝ 1495233,8 (մեկ միլիոն չորս հարյուր իննսունհինգ հազար երկու հարյուր երեսուներեք ամբողջ 8) ՀՀ դրամ, քանի որ նշված քանակների չափով վերացել է «ոլոռ, ամբողջական» և «սոխ, գլուխ» ապրանքատեսակների գնման պահանջը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, կատարել ֆինանսական հատկացումների նվազեցում և այդ գումարի չափով նվազեցնել Պայմանագրի գինը:

1.2 Պայմանագրի 3.1 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

Պայմանագրի գինը՝ նվազեցումից և 07.11.2018թ.-ին միակողմանի մասնակի լուծումից հետո, կազմում է 78640454 (յոթանասութ միլիոն վեց հարյուր քառասուն հազար չորս հարյուր հիսունչորս) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

1.3 Պայմանագրի N1 հավելվածի՝ «տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց»-ի, 8-րդ և 9-րդ չափաբաժինների սյունակը հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն համաձայնագրի հավելված N1-ի:

1.4 Պայմանագրի N2 հավելվածը՝ «վճարման ժամանակացույց»-ը, հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն համաձայնագրի հավելված N2-ի:

## 2. Այլ պայմաներ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է N ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԳՀԱՊՁԲ-18/16-1 ծածկագրով պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրով չնշված՝ կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքները ու պարտականությունները թողնվում են անփափոխ:

2.3 Սույն համաձայնագիրը և իր N1 և N2 հավելվածները կազմված են 5 էջից՝ հայերեն լեզվով, կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ, համաձայնագրի N1 և N2 հավելվածները, համարվում են սույն համաձայնագրի անբաժանելի մասը:

**ԳՆՈՐԴ**

ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայություն
ք. Երևան, Արշակունյաց-63
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011175016
ՀՎՀՀ 02204739

Ծառայության պետ՝
Ա. Մխոյան

(ստորագրություն)
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

«Բիզնես Թրենդ» ՍՊԸ
ք. Երևան, Բաբաջանյան 95 շ 11
Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ ՓԲԸ
Հ/Հ 220300122466000
ՀՎՀՀ 01263483

Տնօրեն՝
Ն.Միքայելյան

(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված N 1
« 30 » « 11 » 2018 թ. կնքված
N 3 Համաձայնագրի
N ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԳՀԱՊՁԲ-18/16-1 ծածկագրով պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԻ 8-ՐԴ և 9-ՐԴ ՉԱՓԱԲԱԺԻՆՆԵՐ

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | մատակարարման | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | արտադրողը և ծագման երկիրը | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | հասցեն | ենթակա քանակը | ժամկետը |
| 8 | 15331154/1 | ոլոռ, ամբողջական | <<Անուշ լինի>> ՍՊԸ<br>ՌԴ | Սերտիֆիկացված ՀUS-ով կամ ԳՕUS-ով: Ոլոռ դեղին գույնի, չորացված, կեղևազրկված: Հատիկները ամբողջական: Խոնավությունը 15%-ից ոչ ավելի: Հանքային, աղբային և այլ խառնուրդների պարունակությունը 0.05%: Խառնուրդների, վնասատուների և վարակի առկայությունը չի թույլատրվում: Փաթեթավորումը գործարանային 25-50 կգ պարկերով: Պատրաստման և պահպանման ժամկետը նշված լինի պարկի վրա: Պիտանելիության մնացորդային ժամկետը մատակարարման պահին ոչ պակաս, քան 80%: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ «Պարենային հումքի և սննդամթերքի անվտանգությանը և սննդային արժեքին ներկայացվող հիգիենիկ պահանջներ» N 2-III-4.9-01- | կգ | 229.33 | 3210620 | 14000 | ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության հիմնարկներ՝ համաձայն բաշխման ցուցակի | 14000 | 2018թ.<br>2-րդ եռամսյակ 6000 կգ,<br>3-րդ եռամսյակ 6000 կգ,<br>4-րդ եռամսյակ 2000 կգ,<br>եռամսյակների ընթացքում, ոչ ուշ մինչ 15.12.2018թ. |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | 2010 նորմատիվները հաստատելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի հրամանի և <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 8-րդ և 9-րդ հոդվածների: | | | | | | | |
| 9 | 15331161/1 | սոխ, գլուխ | գյուղմթերք ՀՀ | Ընտիր տեսակի, թարմ, կիսակծու, լայնակի տրամագծի չափերը 4-10 սմ տիրույթում: Մատակարարի նախաձեռնությամբ փաթեթավորման դեպքում՝ մինչև 50 կգ ցանցի պարկերով: Պիտանելիության մնացորդային ժամկետը մատակարարման պահին ոչ պակաս, քան 80%: Անվտանգությունը, փաթեթավորումը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված «Թարմ պտուղ բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀօրենքի 8-րդ և 9-րդ հոդվածների: | կգ | 149.53 | 5164766,2 | 34540 | ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության հիմնարկներ՝ համաձայն բաշխման ցուցակի | 34540 | 2018թ.<br>2-րդ եռամսյակ 5000 կգ,<br>3-րդ եռամսյակ 12000 կգ,<br>4-րդ եռամսյակ 17540 կգ,<br>եռամսյակների ընթացքում, ոչ ուշ մինչ 15.12.2018թ. |

**ԳՆՈՐԴ**

ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայություն
ք. Երևան, Արշակունյաց-63
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011474534
ՀՎՀՀ 02204739

Ծառայության պետ՝
Ա.Մխոյան

(ստորագրություն)
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

«Բիզնես Թրենդ» ՍՊԸ
ք. Երևան, Բաբաջանյան 95 շ 11
Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ ՓԲԸ
Հ/Հ 220300122466000
ՀՎՀՀ 01263483

Տնօրեն՝
Ն.Միքայելյան

(ստորագրություն)
Կ.Տ

*Հավելված N 2*
*« 30 » « 11 » 2018 թ. կնքված*
*N 3 Համաձայնագրի*
*N ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԳՀԱՊՁԲ-18/16-1 ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ եռամսյակների, այդ թվում | | | | |
| | | | 1-ին եռամսյակ | 2-րդ եռամսյակ | 3-րդ եռամսյակ | 4-րդ եռամսյակ | ընդամենը |
| 2 | 15112150/1 | հավի մսեղիք, պաղեցրած, տեղական ամբողջական | - | 2864349 | 12412179 | 21959940 | 21959940 |
| 8 | 15331154/1 | ոլոռ, ամբողջական | - | 1376004 | 2752008 | 3210620 | 3210620 |
| 9 | 15331161/1 | սոխ, գլուխ | - | 747645 | 2541993 | 5164766,2 | 5164766,2 |
| 10 | 15332140/1 | խնձոր, միջին չափի | - | 529200 | 1411200 | 3528000 | 3528000 |
| 12 | 15511600/1 | խտացրած կաթ շաքարով | - | 3929107,8 | 3929107,8 | 3929107,8 | 3929107,8 |
| 13 | 15530000/1 | կարագ, սերուցքային | - | 6784617 | 18092312 | 29400020 | 29400020 |
| 14 | 15541200/1 | պանիր, չանախ | - | 1272000 | 6360000 | 11448000 | 11448000 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | | | | | 78640454 |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

**ԳՆՈՐԴ**

ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայություն
ք. Երևան, Արշակունյաց-63
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011474534
ՀՎՀՀ 02204739

Ծառայության պետ՝
Ա.Մխոյան
(ստորագրություն)
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

«Բիզնես Թրենդ» ՍՊԸ
ք. Երևան, Բաբաջանյան 95 շ 11
Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ ՓԲԸ
Հ/Հ 220300122466000
ՀՎՀՀ 01263483

Տնօրեն՝
Ն.Միքայելյան
(ստորագրություն)
Կ.Տ